ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԹԻՄԸ ՀԱՂԹՈՂ ԵԱՆԱՉՎԵՑ ԲԻԼԻԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

30.09.2022 15:49

Փաստաբանների պալատը այս տարվա մարզամշակութային մրցաշարերում ունեցավ հերթական ձեռքբերումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ այսօր՝ սեպտեմբերի 30-ին, անցկացվեց բիլիարդի միջազգային մրցաշար, որին մասնակցեց նաև Փաստաբանների պալատի թիմը:

Մրցաշարին հրավիրված էին մասնակցելու ՀՀ պետական մարմինների և այլ կառույցների թիմեր:

Ավելի քան չորս տասնյակ մասնակիցների խաղում լավագույն արդյունքը ցույց տվեց **Փաստաբանների պալատի թիմը՝ նվաճելով պատվավոր առաջին տեղի գավաթը**:

Երկրորդ տեղի գավաթը գրավեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիմը, իսկ երրորդ տեղինը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

Ի դեպ, հաղթանակ տոնող Փաստաբանների պալատի թիմի մասնակիցները ունեցան նաև անհատական ձեռքբերումներ:

Կորյուն Քիշմիրյանը զբաղեցրեց **երկրորդ** հորիզոնականը, իսկ Ժորա Համբարձումյանը **երրորդ** հորիզոնականը:

Մրցաշարի ավարտին հաղթող մասնակիցներն ու թիմերը պարգևատրվեցին գավաթներով, պատվոգրերով և դրամական պարգևներով:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })